

կու տայ, կամարներով կ'ամրացնէ պատերը և աւելի ևս կ'ընդարձակէ եկեղեցին, միաբաններու և ժամարարներու համար ալ յատուկ սենեակներ աւելցնելով (Տե՛ս Հաննէ, Պատմ. Երուսաղէմի, էջ 170-171):



Ի Ե

Ս. ՆԻԿՈՂԱՅՈՍԻ ՎԱՆՔԸ ՅՈՊՊԷԻ ՄԷՋ

Յոպպէն՝ որուն երբայեցերէնն է Եսաֆ, Պաղեստինի ծովային մէկ քաղաքն է, որ կրնայ նկատուիլ Երուսաղէմի սովորական նուազանգիւտը: Յոպպէն հիմակ կը կոչուի Եսաֆս:

Այս անունը Քարնաքի մեհեանի նախազրտն աշխարհագրական ցանկերուն մէջ կը կարգացուի Իաքու կամ Իօքու: Ասորեստանեայց արձանագրութեանց մէջ կը յիշուի Իա-աք-բիւ-իւ, համազօր Իաքբիլի: Այս անուան հաւանական նշանակութիւնն է գեղեցկութիւն, որ կը ծագի եսաֆս արմատէն, եւ կը նշանակէ գեղեցիկ ըրրալ: Յոպպէն շինուած է ժայռոտ բլուրի մը վրայ, որ կը բարձրանայ գրեթէ երեսուն մէթր այն դաշտէն՝ որ կը տարածուի դէպի արեւելք. և յիսուն մէթր բարձր Միջերկրականէն՝ որ կը թրջէ իր ստորոտը և ալեղնաձև կը տարածուի հարաւէն հիւսիսային արեւելք: Քաղաքին տուները բլուրին բոլոր զտովայրերը ծածկելով՝ շատերը այժմ, ինչպէս երբեմն, տափարակ տանիքներ ունին (Գործք Առաջ. Ժ. 9): Կարմիր կղմինաքով տանիքները սակայն, հեռզհեռէ արգիական տեսք մը կու տան: Այն պարիսպներէն՝ որով անցելոյն մէջ ան միշտ չըլապատուած էր, ծովկզրին երկայնքին վրայ և հարաւային կողմը կը մնան ատամնաւոր պատերու մասեր և մարտկոցներ, որոնց ստորոտը կը մնան անգործածելի հրանոթներ: Բլուրին գագաթը քիչ տարիներ յառաջ կը տեսնուէր ամրացեալ զգհակ մը աշտարակով, շինուած բեկորներովն այն հին միջնաբերդերուն՝ որոնք կառուցուած էին նոյն տեղերը: